ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/128/2026

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **20 հուլիսի 2026թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Եփրեմ Կարապետյանի 2026 թվականի հուլիսի 20-ին ֆինելով «Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության քարտուղարության անդամ Արա Ալեքսանդր Կոմշույանի կողմից Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի՝ 2021 թվականի գույքի և եկամուտների հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/128/2026 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթների շրջանակում, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով (այսուհետ՝ նաև Սահմանադրական օրենք) սահմանված հայտարարագրերը, մասնավորապես՝ կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամների՝ 2021 թվականի գույքի և եկամուտների հայտարարագրերն Օրենքով սահմանված ժամկետում ներկայացված լինելու փաստի

ստուգման արդյունքում պարզել է, որ «Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) քարտուղարության անդամ Արա Ալեքսանդր Կոմշույանի Հայտարարագիրը ներկայացված չէ Հանձնաժողով:

1.2 Հանձնաժողովի կողմից 2026 թվականի ապրիլի 20-ին և 27-ին թիվ 01/832/13-2026 գրությունը «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անհատական ծանուցման ընթացակարգով՝ էլեկտրոնային փոստով, ուղարկվել է Արա Ալեքսանդր Կոմշույանին՝ տեղեկացնելով Հայտարարագիրը ներկայացնելու պարտականության վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, լրացնել և ներկայացնել համապատասխան հայտարարագիրը: Արա Ալեքսանդր Կոմշույանը ծանուցվել է նաև, որ հայտարարագիրը 30 օրվա ընթացքում չներկայացնելու դեպքում, անհրաժեշտ է ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը՝ ժամը 11:30-ին, ներկայանալ Հանձնաժողով մասնակցելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմելուն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնգօրյա ժամկետում Հանձնաժողովը չի ստացել էլեկտրոնային փոստով ուղարկված ծանուցումը Արա Ալեքսանդր Կոմշույանի կողմից կարդալու մասին էլեկտրոնային հավաստում, և հիշյալ ժամկետում չի ներկայացվել Հայտարարագիրը՝ ծանուցումը 2026 թվականի մայիսի 6-ին փոստային կապի միջոցով՝ պատվիրված նամակով ուղարկվել է Արա Ալեքսանդր Կոմշույանի՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված հասցեով:

Նշված ծանուցումը 2026 թվականի մայիսի 7-ին տեղադրվել է հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում (www.azdarar.am) և ուղարկվել է Արա Ալեքսանդր Կոմշույանի էլեկտրոնային փոստի հասցեին, որից հետո Արա Ալեքսանդր Կոմշույանն օրենքի ուժով 2026 թվականի հունիսի 17-ին համարվել է պատշաճ ծանուցված: Սակայն, ծանուցված համարվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Արա Ալեքսանդր Կոմշույանի կողմից համապատասխան հայտարարագիրը չի ներկայացվել:

1.3 2026 թվականի հունիսի 17-ին պատշաճ ծանուցված Արա Ալեքսանդր Կոմշույանի բացակայությամբ կազմվել է թիվ 146/26 ՎԻՎ արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.4 Հանձնաժողովի կողմից 2026 թվականի հունիսի 19-ին թիվ 01/1815-2026 գրությամբ Արա Ալեքսանդր Կոմշույանին ծանուցում է ուղարկվել, որ վերոնշյալ առերևույթ իրավախախտման հիման վրա 2026 թվականի հուլիսի 9-ին՝ ժամը՝ 14:30-ին, իրականացվելու է գործի քննություն: Նշված ծանուցումը Արա Ալեքսանդր Կոմշույանի կողմից ստացվել է 2026 թվականի հունիսի 22-ին (հիմք՝ [redacted] փոստային առաքանին):

1.5 2026 թվականի հուլիսի 9-ին վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Արա Ալեքսանդր Կոմշույանի և վերջինիս ներկայացուցիչ Մինաս Արաբյանի ներկայությամբ

տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն, որի ընթացքում Արա Ալեքսանդր Կոմշույանի կողմից Հանձնաժողով է ներկայացվել վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու միջնորդություն՝ պահանջվող հայտարարագիրը ներկայացնելու նպատակով, միաժամանակ հայտնել է, որ Հանձնաժողովի կողմից էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված ծանուցումները վերջինիս կողմից չեն ստացվել, քանի որ նշված էլեկտրոնային փոստի հասցեն իրեն չի պատկանում, ուստի հայտարարագիր ներկայացնելու պարտականության մասին փաստացի տեղեկացել է 2026 թվականի հունիսի 22-ին փոստային կապի միջոցով: Բացի այդ, նշել է նաև, որ նշված ժամկետից մինչև սույն թվականի հուլիսի 3-ը վերջինս համակարգ մուտք գործելու հնարավորություն չի ունեցել՝ մուտքանուն չունենալու պատճառով:

1.6 Հանձնաժողովը բավարարել է միջնորդությունը և 2026 թվականի հուլիսի 9-ի որոշմամբ վարույթի ժամկետը երկարաձգել է 10 օրով՝ հնարավորություն տալով վերջինիս անհրաժեշտ տվյալները ձեռք բերելու և ներկայացնելու համար: Միաժամանակ գործի քննության օր է նշանակվել 2026 թվականի հուլիսի 20-ին՝ ժամը 15:45-ին: Նշված ծանուցումը վերջինիս կողմից ստացվել է 2026 թվականի հուլիսի 17-ին (հիմք՝ էլեկտրոնային հավաստում), որին կից ներկայացված դիմումով Ա. Կոմշույանը տեղեկացրել է, որ «Սասնա Ծռեր» համահայկական կուսակցությանն արդեն իսկ ներկայացրել է դիմում՝ իր անդամությունը դադարեցնելու վերաբերյալ:

1.7 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Արա Ալեքսանդր Կոմշույանի բացակայությամբ 2026 թվականի հուլիսի 20-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումները ու պարզաբանումները

Վարույթի ընթացքում Արա Ալեքսանդր Կոմշույանի կողմից պարզաբանումներ չեն ներկայացվել:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է ՎԻՎ/128/2026 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային շտեմարանում առկա տվյալների համաձայն՝ Արա Ալեքսանդր Կոմշույանը 2018 թվականի նոյեմբերի 8-ից հանդիսանում է «Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ՝ քարտուղարության անդամ:

3.2 «Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ Արա Ալեքսանդր Կոմշույանի «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձ:

3.3 Արա Ալեքսանդր Կոմշույանի կողմից Հայտարարագիրը Օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

3.4 Գործի քննության օրվա դրությամբ Արա Ալեքսանդր Կոմշույանի Հայտարարագիրը ներկայացվել է Հանձնաժողով:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները**, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամները (այսուհետ նաև՝ հայտարարատու պաշտոնատար անձինք) պարտավոր են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիր (..):

4.2 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնը **ստանձնելու,** դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրեր:

4.3 Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերը ներկայացնելու կարգի նկատմամբ կիրառելի են «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքների համապատասխան նորմերը, (...):

4.4 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն **ստանձնելու**, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

4.5 Օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» և «Կուսակցությունների մասին» օրենքներով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.9 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.10 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.12 Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

4.13 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Սույն դեպքում, Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ ունի ապահովել Կուսակցությունների գործունեության թափանցիկության ամբողջականությունը և բացառելու կուսակցության մտտապես գործող ղեկավար մարմնի առանձին անդամներին ֆինանսավորելու միջոցով կամ նրանց անունով գույքի ձևակերպման միջոցով կուսակցությունների ֆինանսավորման վերաբերյալ առկա իրավակարգավորումները շրջանցելը՝ այդպիսով ապահովելով կուսակցությունների գործունեության ֆինանսական թափանցիկությունը և վերջիններիս անկախությունը մասնավոր շահերից:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը:

Տվյալ դեպքում Արա Ալեքսանդր Կոմշուլյանը միևնույն գործի քննության օրվա դրությամբ ներկայացրել է Հայտարարագիրը, ինչի արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի դրույթներով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 282-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արա Ալեքսանդր Կոմշույանին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն՝ կարճելով ՎԻՎ/128/2026 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արա Ալեքսանդր Կոմշույանին այն սահմանված կարգով հանձնելուն (հանձնված համարվելուն) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ